**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

***Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի վարչական տարածքում «Բրայթ Էներջի» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային լսումների***

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք ՀՕ-150-Ն, խմբ. 3.05.24թ.) և ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. հունիսի 4-ին ժամը 12:00-ին՝ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի է ունեցել քաղաքացի «Բրայթ Էներջի» ՍՊԸ-ի կողմից արևային ֆոտովոլտային կայանի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 2-րդ հանրային լսումը: Հանդիպմանը մասնակցում էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի, նախաձեռնող կողմի, Աղբերք բնակավայրի վարչական ղեկավարը, աշխատակիցները և բնակիչները:

Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ **Հ. Ֆրունզիկյանը** ողջունեց ներկաներին, ներկայացավ և խնդրեց ներկաներին ներկայանալ:

**Հ. Ֆրունզիկյանը** ներկայացրեց հանդիպման նպատակը, այնուհետև հայտնեց, որ Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (ՀՕ-150-Ն) օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի «ա». ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է փորձաքննության: Գնահատման հաշվետվությունը ուղղարկվել է տարբեր նախարարություններ և շրջակա միջավայրի մասնագիտական ստորաբաժանումներ որոնք իրենց առաջարկություններն ու դիտողություններն են ներկայացրել, փորձագետի կողմից փորձաքքնվել է և ուղղարկվել է լրամշակման, որը լրամշակվել է նախաձեռնողի կողմից: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի վրա հիմնական բացասական ազդեցությունները կապված փոշու արտանետումների հետ, վառելիքի արտանետումները շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ, առաջացող թափոնների և այլն:

Ներկայացնելուց հետո խոսքը փոխանցեց նախաձեռնող կողմի ներկայացուցչին և խնդրեց մանրամասն ներկայացնի նախատեսվող գործունեությունը: **Ներկայացուցիչը** ներկայացավ և ներկայացրեց բնակավայրում նախատեսվող աշխատանքները, ծավալները, ծանոթացրեց նախագծին և գործունեության իրականացման ընթացքում առաջացող ազդեցությունները շրջակա միջավայրի վրա, և դրանց նվազեցմանն միտված միջոցառումների շրջանակը, ինչպես նաև համայնքում սոցիալական ազդեցությունը և ստեղծվող աշխատատեղերը:

**Հ. Ֆրունզիկյանը** հարց բարձրացրեց գնահատման հաշվետվության լրամշակման վերաբերյալ և ներկայացրեց այն կետերը որոնք թերի են լրամշակվել, և հավելեց որ պետք է իրականացվի ճշգրիտ լրամշակում:

**Նեկայացուցիչը** նշումներ կատարեց բաց թողնված կետերի վերաբերյալ և հավելեց որ առաջիկա 3 աշխատանքային օրվա ընթաքում կիրականացվի և կներկայացվի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ:

**Հ. Ֆրունզիկյանը** հետաքրքրվեց նախատեսվող գործունեության տարածքի հողերի նպատակային նշանակության վերաբերյալ և հավելեց որ, ըստ ներկայացված կոորդինատների տարածքում առկա են տարբեր նպատակային նշանակության հողեր, և պահանջեց պարզաբանում տալ:

**Նեկայացուցիչը** ընդունեց և ասաց, որ մեկ հողի վերաբերյալ ունենք փաստաթուղթ, որը պատկանում է այլևս «Բրայթ Էներջի» ՍՊԸ-ին, որը մյուս փոփոխությունների հետ կներկայացնենք ՇՄԱՓԿ ՊՈԱԿ:

**Վարչական ղեկավարը** հարց բարձրացրեց սոցիալական ծրագրերի իրականացման վերաբերյալ և հավելեց որ աշխատակիցները ներգրավված լինեն հենց բնակավայրից:

**Նեկայացուցիչը** պատասխանեց, որ այո կան սոցիալական աջակցության ծրագրեր որը համայնքա վարչական ղեկավարի հետ կքննարկվեն և ըստ անհրաժեշտության կիրականացվեն, իսկ աշխատակիցների մասով ասաց որ բացի մասնագիտական հմտություններ պահանջող աշխատատեղերից, մնացածը կլինեն բնակիչները:

Այլ հարցեր չհնչեցին **Հ. Ֆրունզիկյանը** շնորհակալություն հայտնեց ներկաներին և ամփոփեց հանդիպումը:

Հանրային լսումների պատասխանատու և վարող՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն «ՊՈԱԿ» ՝

«ՇՄԱՓԿ» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Հ.Ֆրունզիկյան

«Բրայթ Էներջի» ՍՊԸ-ի տնօրեն/ներկայացուցիչ՝